# ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

## Տ. ՄԻՆԱՍ ԱԲԵՂԱ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(10 օգոստոսի, 2014 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն.
«Որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո»
**(Մարկ. Բ. 5):**

Սիրելի՛ հավատացյալներ,

Ս. Պատարագին Մարկոսի Ավետարանից ընթերցված այս խոսքերը Քրիստոսով հավատքի կոչ են անում. հավատք, որ հոգու եւ մարմնի կատարյալ բժշկություն պարգեւեց անդամալույծին:

Այսօրվա ավետարանական հատվածում պատմվում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի կատարած մի հրաշագործ բժշկության մասին: Երբ Հիսուս Կափառնայումում վերադարձավ վարդապետելու մարդկանց եւ նրանց հոգիներն ու մարմինները բժշկելու, ոմանք իրենց հիվանդին, որ անդամալույծ էր՝ պառկած մահճին, խռնված բազմության պատճառով չկարողանալով դռնով ներս բերել եւ մոտեցնել տան կենտրոնում կանգնած Քրիստոսին՝ բարձրանում են տանիք եւ պարաններով մահճին պառկած անդամալույծին երդիկից իջեցնում եւ բերում են Քրիստոսի ոտքերի առջեւ: Եւ Հիսուս, տեսնելով անդամալույծին բերողների հավատքը, ասաց նրան. «Որդյա՛կ, քո մեղքերը քեզ ներված են»:

Այս խոսքերը, սակայն, այնտեղ նստած օրենքի ուսուցիչներից ոմանց հայհոյություն թվացին, քանզի, ըստ Հին Ուխտի հետեւորդների՝ ո՞վ կարող էր ներել մարդկանց մեղքերը, եթե ոչ՝ միայն Աստված: Եւ Հիսուս, իմանալով նրանց մտածումը, ասաց. «Ինչո՞ւ եք այդպես մտածում, ո՞րն է ավելի դյուրին. ասել անդամալույծին՝ մեղքերդ քեզ ներված են, թե՞ ասել՝ վե՛ր կաց, վերցրո՛ւ մահիճդ եւ գնա՛ քո տունը»: Բայց որպեսզի իմանաք, որ Մարդու Որդին իշխանություն ունի երկրի

վրա մեղքերը ներելու, անդամալույծին ասաց. «Վերցրո՛ւ քո մահիճը եւ գնա՛ քո տունը»: Եւ անդամալույծն իսկույն բոլորի աչքի առջեւ վեր կացավ, վերցրեց իր մահիճն ու շտապեց տուն: Կատարվածը տեսնելով՝ բազմությունը նախ զարմացավ, ապա հիացավ եւ փառավորեց Ամենազոր Աստծո Սուրբ անունը:

Իսկ ինչո՞ւ Քրիստոս անմիջապես չդիմեց անդամալույծին բերողներին եւ ապա նրանց հիվանդին՝ ասելով. «Վերցրո՛ւ քո մահիճը եւ գնա՛ քո տուն», այլ ցույց տվեց, որ նույն Ինքը՝ Մարդու Որդին, երկրի վրա մեր մեղքերը ներելու իշխանություն ունի մարդկանց մեղքերը ներելով՝ Քրիստոս նրանց եւ՛ մարմնին, եւ՛ հոգուն առողջություն է պարգեւում:

Սիրելինե՛ր, միայն հավատքով է հնարավոր հասկանալ այս իրողությունը: Հավատքի դերն այսօր եւս մնում է անգերազանցելի: Արդի գիտական մեթոդներով կարելի է շատ մեծագործություններ կատարել, սակայն միայն հավատքով է հնարավոր տարիների անբուժելի հիվանդությունը մեկ վայրկյանում վերացնել: Ինչպես ասում է ավետարանիչը, «Ամեն ինչ հնարավոր է նրան, ով հավատում է»: Սա չի նշանակում, թե յուրաքանչյուր մարդ իր ցանկացածը նույն վայրկյանին պիտի ունենա եւ տիրանա իր բաղձանքներին, այլ հավատքով հարատեւողն է անպայման հասնում մի նշանակետի՝ հետեւելով իր Փրկչին: Մեկ այլ տեղ առաքյալն ասում է. «Առանց հավատի անհնար է հաճելի լինել Աստծուն, քանի որ ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա եւ վարձահատույց է լինում նրանց, ովքեր փնտրում են Իրեն»:

Սիրելինե՛ր, քրիստոնեությունը մեզ կատարելության բոլորովին ուրիշ ճանապարհ է ուսուցանում, որտեղ գլխավոր գործոնները մեր մարդկային միտքն ու կամքը չեն, այլ առ Աստված անվերապահ հավատը, որ մեզ մաքրում է եսասիրական տարբեր ձգտումներից եւ առաջնորդում առ Աստված: Այդ զորավոր հավատն է, որ հրաշագործում է մեր կյանքում:

Մի մարդ լսում է, որ հեռավոր մի վանքում մեծամեծ հրաշքներ են տեղի ունենում. ամեն գնով որոշում է այցելել այդ վանք եւ ամրանալ հավատքի մեջ: Երկար ճանապարհ է կտրում, հասնում վանք եւ որպես ուխտավոր հաստատվում այնտեղ: Անցնում է մեկ օր, մեկ շաբաթ, մեկ ամիս, սակայն նա հրաշքի ականատես չի լինում, ուստի այդ մտահոգությամբ դիմում է վանահորը:

«Եղբա՛յր, - պատասխանում է վանահայրը, - մարդիկ կարծում են, թե հրաշք է այն, որ Աստված լսում ու կատարում է իրենց կամքը, սակայն իրական հրաշքն այն է, որ մարդն է կատարում Աստծո կամքը»:

Անդամալույծին բերող մարդիկ հավատալով, որ միայն Քրիստոս կարող է բժշկել անդամալույծին, մոտեցան Հիսուսին, եւ հրաշքը տեղի ունեցավ:

Ուրեմն՝ մեր անդամալույծ հոգիները մոտեցնենք Փրկչին, խոստովանենք մեր մեղքերը այն գիտակցությամբ, որ միայն Տերը կարող է մեղքերը ներելով մեր հոգիներին եւ մարմիններին բժշկություն պարգեւել:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր նաեւ Վեհափառ Հայրապետի բարձր

պնօրհնությամբ Հայ Առաքելական բոլոր եկեղեցիներում կատարվելու է հոգեհանգստյան կարգ՝ վերջին օրերին հայ-ադրբեջանական պետական սահմանին եւ ղարաբաղաադրբեջանական ուժերի շփման գծում տեղի ունեցած մարտական գործողությունների հետեւանքով իրենց կյանքը նվիրաբերած քաջարի հայորդիների հոգիների հանգստության եւ խաղաղության համար:

Հավերժ պիտի հիշվի սխրանքը մեր զինվորների, եւ միշտ աղոթք պիտի բարձրանա նրանց հոգիների համար:

Ամենքիդ հրավիրում եմ աղոթքի: Աղոթենք, որ աստվածասեր մեր ժողովուրդը հայրենի օրհնյալ երկրում խաղաղության, ապահովության մեջ կերտի իր բարօր ու շեն կյանքը եւ հաղթական ապագան:

Թ-ող Աստծո սերը, շնորհն եւ ողորմությունը միշտ մեզ բոլորիս ուղեկից լինեն եւ փրկեն մարմնի եւ հոգու փարբեր վտանգներից այժմ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: